# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## Ջրվեժի համայնքապետարանի «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման գնահատման հանձնաժողովի առաջին նիստի

Ջրվեժ

«17» հունվարի 2022թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Սանթրոսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Իսոյան

### 1. Գնանշման հարցման գնահատման հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Մարգարյան)

Հանձնաժողովի քարտուղար Տ.Իսոյանը ներկայացրեց գնանշման հարցման գնահատման հանձնաժողովի նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1.1. Գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
1.2. Գնանշման հարցման հայտարարության տեքստը հաստատելու մասին
1.3. Գնանշման հարցման հրավերի տեքստը հաստատելու մասին
1.4. Գնանշման հարցման հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

Ա.Մարգարյանը առաջարկեց հաստատել առաջարկվող օրակարգը:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 ընդունվեց որոշում օրակարգը հաստատելու մասին:

### 2. Գնանշման հարցման հայտարարության տեքստը հաստատելու մասին

(Ա.Մարգարյան)

Հանձնաժողովի քարտուղար Տ.Իսոյանը ներկայացրեց «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման հայտարարության տեքստը, Ա.Մարգարյանը առաջարկեց հաստատել ներկայացված հայտարարության տեքստը:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 ընդունվեց որոշում.
հաստատել «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/4» ծածկագրով հայտարարության տեքստը, հանձնարարել Տ.Իսոյանին օրենքով սահմանված կարգով գնանշման հարցման հայտարարության տեքստը ուղարկել հրապարակման և կատարել գրանցամատյանի ստեղծման և վարման աշխատանքները:

### 3. Գնանշման հարցման հրավերի տեքստը հաստատելու մասին

(Ա.Մարգարյան)

Հանձնաժողովի նախագահ Ա.Մարգարյանը ներկայացրեց «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստը և առաջարկեց հաստատել այն:
Քվեարկությամբ՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 ընդունվեց որոշում.
հաստատել «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստը և օրենքով սահմանված կարգով գնանշման հարցման հրավերի տեքստը ուղարկել հրապարակման:

4. Գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին

---

(Ա.Մարգարյան)

Հանձնաժողովի քարտուղար Տ.Իսոյանը տեղեկացրեց, որ գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի բացման նիստը անցկացվելու է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/4» ծածկագրով գնանշման հարցման հայտարարության տեքստի հրապարակմանը օրվանից հաշված՝ 7-րդ օրվա ժամը 11:30-ին՝ ներկայացված փաթեթների բացման համար Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ, Մելքոնյան 76 հասցեով Ջրվեժի համայնքապետարանի շենքում:

Քվեարկությամբ՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 ընդունվեց որոշում.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ն.Սանթրոսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Տ.Իսոյան